

յապաղ առաքել՝ գրեաց զայս ամենայն Փոխանորդն եւ առաքեաց յերուսաղէմ։ Սափանեցաւ ծովային ճանապարհորդութիւն յապոտամբութենէ Յունաց, եւ արգելան ուխտաւորք գնալ յերուսաղէմ (1822)։

Յակոբ Եպիսկոպոս Լիւսդրացի (Ագշէհիւր) եկն յերուսաղէմ, եւ կացեալ անդ զաւուրս ինչ մեկնեցաւ անտի՝ եւ Գարրիէլ Պատրիարք ծանոյց զայս Փոխանորդին՝ ի Կոստանդինուպօլիս։

Ի զայրանալ խռովութեանցն Հայոց Կաթօլիկ անուանելոց ի մայրաքաղաքի անդ, Սուլթան Մահմուտ Արքայ առաքեաց հրովարտակ առ Պօղոս Պատրիարք Հայոց, անհետ առնել ի քաղաքէն զԿաթօլիկ քահանայս, չպատարագել նոցա ի տունս, եւ հնազանդիլ ամենեցուն Պատրիարքին Հայոց, եւ զանհնազանդան ծանուցանել ի Դուռն՝ զի պատժեցին, ինչք եւ ստացուածք նոցին գրաւեսցին յարքունիս։ Եւ նորա կոչեալ զգլխաւորս երկուց կողմանց արար ժողով մեծահանգէս, ուր ընթերցաւ առաջի ամենեցուն հրովարտակն Արքայի, եւ զկնի ճոխ ատենաբանութեան Պօղոսի, ամենեքեան հնազանդեալ ընկալան զդաւանութիւն եկեղեցւոյն Հայոց, եւ ձեռն արկին ի գիրն զոր պատրաստեալ էր Պօղոս զնոյն արարին եւ հասարակութիւնք նոցին շաքարեցան 6 քահանայք, եւ 11 եկին ի հնազանդութիւն, եւ այլքն հանդարտեցան ի տեղիս իւրեանց։ Եւ ժողովել Արքայ զամենայն եկեղեցական ըսպասս եւ զգգեւատս, որք գտան ի տունս նոցա եւ առաքեաց առ Պատրիարքն Հայոց, պատուիրեալ նմա առնուլ ի նոցանէ 1000 քսակս արծաթոյ եւ առաքել առ ինքն, եւ նա կառարեաց զհրաման նորա։ Զայս արար Արքայ վասն Տիւղեան գերդաստանին, որք էին ի բանտի առ Պօստանձի Պաշին, եւ կանայք նոցա ի Պատրիարքարանն Վաճառեաց Արքայ զտունս եւ զընակութիւնս նոցին, եւ գրուեաց զամենայն ինչս եւ ստացուածս եւ մերկացոյց յամենայնէ ի պատճառս սոցա երկարեցաւ գործ Բեթղէհէմի դրան։

Իսկ Գարրիէլ Պատրիարք առաքեաց զտունաւ հաշուոյ Աթոռոյն ի ձեռն Փոխանորդին իւրոյ Զմիւռնացի Յարութիւն վարդապետի, որ էր այր անհանձար եւ առանց դպրութեան, գրեալ գիր առ իւրաքանչիւր Ամիրայս։